ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
պայմանագրի շնորհման մասին

Ծրագրի անվանումը՝ «Սեյսմիկ անվտանգության բարելավման ծրագիր»
Երկիրը՝ Հայաստան
Ծրագրի համարը՝ 3284-ARM
Գնման ընթացակարգի անվանումը՝ «ՀՀ Շիրակի մարզի Ազատան համայնքի միջնակարգ դպրոցի նոր մասնաշենքերի կառուցում»
Գնման ընթացակարգի ծածկագիրը՝ A-37SH
Գնման ընթացակարգի եղանակը՝ «Ազգային մրցակցային մրցույթ»
Գնման ընթացակարգի հայտերը՝

№	Հայտատուի անվանունը	Հայտի արժեքը բացման ժամանակ, ՀՀ դրամ	Հայտի գնահատված արժեքը, ՀՀ դրամ
1	«Արհովշին» ՍՊԸ	1,585,000,000.00	1,584,999,891.67
2	«Մեծն Էրիկ» ՍՊԸ	1,610,850,260.00	1,610,850,260.40
3	««Արսև» ՍՊԸ և «Բիդեք» ՍՊԸ» ՀԳ	1,640,997,216.00	1,640,997,216.00
4	Հայաստանի սպառողական կոոպերատիվների միության «Ախուրյանի Կոոպշին» ՍՊԸ	1,749,337,521.00	1,749,337,512.82

Մերժված հայտերի Հայտատուները և դրանց մերժման պատճառները՝ Չկա
Հաղթող ճանաչված Հայտատուն՝ «Արհովշին» ՍՊԸ
Պայմանագրի շնորհման ամսաթիվը՝ 14 դեկտեմբերի 2021թ.
Պայմանագրի գինը՝ 1,584,999,892 ՀՀ դրամ, ներառյալ բոլոր անուղղակի տեղական հարկերը:

Պայմանագրի տևողությունը՝ շինարարական աշխատանքների մեկնարկից մինչև ավարտը նախատեսվում է՝ 730 օր:

Պայմանագրի շրջանակը՝ Շիրակի մարզի Ազատանի միջնակարգ դպրոցի նոր մասնաշենքը նախատեսվում է կառուցել դպրոցի տարածքում, գոյություն ունեցող երկհարկանի 49.5 x 15.4 գաբարիտային չափերով և 1124.19 քմ մակերեսով դպրոցի հետնամասում: Նոր կառուցվող մասնաշենքերի համալիրը բաղկացած է դեֆորմացիոն կարերով անջատված և ներքին տարածքներով միացված վեց մասնաշենքերից, որոնք կապված են գոյություն ունեցող դպրոցին նոր կառուցվող տաքանցումով:
Համաձայն առաջադրանքի նոր մասնաշենքերը նախատեսված են 384 (ոչ տարրական) աշակերտի համար: Տարրական դասարանների համար նախատեսվում է գոյություն ունեցող մասնաշենքը: Նոր մասնաշենքերի նախագծման և տարածքում տեղադրման հիմնական սկզբունքներն են՝ գործող նորմերի ապահովումը, շենքերի (հիմնականում դասասենյակների) գերադասելի արևային օրիենտացիան և հնարավորինս քիչ ծառահատման անհրաժեշտությունը: Շինարարական աշխատանքների ավարտից հետո դպրոցի ընդհանուր մակերեսը կազմելու է 5519.2 քմ, այդ թվում՝ 1124.19 քմ գոյություն ունեցող մասնաշենք և 4395 քմ նոր կառուցվող: